

**«ՀԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ». ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ԵՎ  
ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Ներսիսյան Ա. Հ., Սրտաշյան Վ. Բ.**

Շիրակի պետական համալսարան, ՀՀ, քաղաք Գյումրի, hajarmen77@gmail.com,  
srtashyan@gmail.com

Մեր հետազոտության նպատակն է հիմնավորել «Հայկական աշխարհաքաղաքա-կանությունը» որպես գիտակարգ և պրակտիկ քաղաքականության հիմք՝ ձևավորման ու զարգացման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոհիշյալ նպատակից՝ առաջադրվել են հետևյալ հետազոտական խնդիրները՝

- Հիմնավորել «Հայկական աշխարհաքաղաքականության» բովանդակությունը,
- Դիտարկել Հայաստանի Հանրապետությանն ուղղված աշխարհաքաղաքական մարտահրավերները,
- Վերլուծել «Հայկական աշխարհաքաղաքականության» ակտորները,
- Բացահայտել «Հայկական աշխարհաքաղաքականության» նպատակային գործունեության ասպեկտները:

Հետազոտական խնդիրների լուծման համար օգտվել ենք ինչպես հասարակական աշխարհագրական, այնպես համագիտական մեթոդներից. մասնավորապես, գիտական նկարագրության, համամետա-աշխարհագրական, վերլուծության, համադրման, տեսական ընդհանրացման, գիտական կանխատեսման մեթոդներից (Վալեյան 2008):

«Աշխարհաքաղաքականություն» գիտակարգի ձևավորման ու զարգացման համար անհրաժեշտ սոցիալական պատվերն առկա է նաև մեզ մոտ, քանի որ ՀՀ-ը, լինելով միջազգային իրավունքի սուբյեկտ, կամա թե ակամա բախվում է ժամանակի աշխարհաքաղաքական իրողություններին: Ընդ որում, այդ անհրաժեշտությունը դիտարկում ենք ոչ միայն աշխարհայացքային՝ գիտատեսական, այլև պրակտիկ՝ գիտա-գործնական տեսանկյունից: Ակնհայտ է, որ առաջին տպավորությամբ մեր դատողությունները կարող են ոչ միանշանակ ընդունվել, քանի որ աշխարհում տարածքով 138-րդ, բնակչության թվով՝ 139-րդ, ՀՆԱ-ի ծավալով՝ 132-րդ, բնակչության կենսամակարդակով՝ 84-րդ երկրի համար անհնար է պատկերացնել աշխարհաքաղաքական գործընթացներին ինքնուրույն մասնակցելու կարողություն (Ներսիսյան 2013): Սակայն անհրաժեշտ ենք համարում փաստել, որ «աշխարհաքաղաքականությունը» մենք դիտարկում ենք այնպիսի գիտական դիսցիպլին, որը գիտականորեն հիմնավորված կերպով քննարկում է պետությունների աշխարհաքաղաքական ներուժը, ռեզիոնալ և գլոբալ աշխարհաքաղաքական գործընթացների (աշխարհաքաղաքական մարտահրավերների) ֆոնի վրա, որոնք բխում են Երկիր մոլորակի ժամանակակից աշխարհաքաղաքական կառուցվածքի բնույթից:

Այսպիսով, աշխարհաքաղաքականությունը մենք համարում ենք այն կարևոր գործիքը, որը թույլ կտա գնահատել աշխարհաքաղաքական գործընթացների դինամիկան և ըստ այդմ՝ բացահայտել մեր երկրի ադապտացիոն հնարավորությունն այդ գործընթացներին: Բացի դրանից, պրակտիկ հետազոտությունները հնարավորություն կտան ոչ միայն բացահայտելու մեր երկրի ադապտացիոն ներուժն, ինչը նույնպես խիստ կարևոր է, այլև գնահատելու մեր երկրի (հայ ազգի) հնարավորությունը՝ ազդելու այդ գործընթացների վրա (Ներսիսյան 2011):

Հաջորդ խնդիրը վերաբերում է ՀՀ-ը ուղղված աշխարհաքաղաքական մարտահրավերներին, որոնք բխում են երկրագնդի աշխարհաքաղաքական կառուցվածքից:

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես աշխարհագրական օբյեկտ, իր գեոպոլիտիկ դիրքի համար բացահայտում է քննարկման երեք՝ մակրո (համաաշխարհային), մեզո (տարածաշրջանային) և միկրո (տեղական) մակարդակներ:

Ըստ այդմ, առանձնացնում ենք երկրագնդի աշխարհաքաղաքական կառուցվածքի եռաշերտ մակարդակ.

**I մակարդակը** արտահայտում է աշխարհաքաղաքական ենթակարգության ուժային կենտրոնների տարածական տեղաբաշխումը:

**II մակարդակ:** Երկրագնդի գեոպոլիտիկ կառուցվածքի երկրորդ միավորը աշխարհառազմավարական տարածաշրջանն է (գեոստրատեգիական ռեգիոնը): Հետազոտության խնդիրներից էլնելով՝ մեր դիտարկման հիմնական օբյեկտը աշխարհառազմավարական այն տարածաշրջանն է, որտեղ ներառվում է նաև Հայաստանի Հանրապետությունը: Աշխարհի ներկայիս գեոպոլիտիկ կառուցվածքում նման միավորի կարգավիճակ կարելի է վերագրել Մերձավոր Արևելքին:

**III մակարդակ:** Ենթակարգային երրորդ՝ տեղական մակարդակը, ներառում է օբյեկտի փոխհարաբերությունները անմիջական հարևանների հետ, որոնք դիտարկվում են աշխարհաքաղաքական և՛ հավակնությունների, և՛ մարտահրավերների հարթություններում:

Ակնհայտ է, որ սույն հոդվածի շրջանակներում անհնար է մանրամասն քննարկել ՀՀ աշխարհաքաղաքական մարտահրավերների ու առաջնահերթությունների ձևավորման տրամաբանությունը:

Հայկական պետականությանը ներկայացվող աշխարհաքաղաքական ժամանակակից մարտահրավերների բովանդակությունը ընդհանուր ձևակերպմամբ կարելի է բացահայտել հետևյալ 2 խմբերով՝

1. **Հայկական պետության ներքին անվտանգությանն ուղղված մարտահրավերներ:** Այն պայմանավորված է հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա վերահսկողություն սահմանելու տրամաբանությամբ, որն արտահայտվում է հասարակության զարգացման գաղափարական ուղենիշի սպառմամբ:

2. **Հայկական պետության արտաքին անվտանգությանն ուղղված մարտահրավերներ:** Դրանք ուղղված են պետության ֆիզիկական գոյությանը և կարող են արտահայտվել ռազմական ագրեսիայով կամ տնտեսական ու քաղաքական ճնշմամբ:

Առկա և ապագայում սպասվելիք մարտահրավերներին դիմակայելու լավագույն տարբերակը մենք համարում ենք ՀՀ կողմից աշխարհաքաղաքական «դարպասի» կարգավիճակի հավակնումը: Ճիշտ է, աշխարհաքաղաքական այս կառույցի (եզրույթի) ճարտարապետ Ս.Կոենի առաջարկած սխեմաներում նման դեր վերապահված է Կենտրոնական և Արևելյան Եվրոպային (Lopot 1995, Moreau-Defarge 1998), **սակայն, մեր կարծիքով, հայկական աշխարհագրական տարածությունը նույնպես ունակ է իրականացնելու այդ գործառույթը:** Ավելին՝ այն լիովին բա-վարարում է աշխարհաքաղաքական «դարպասներին» ներկայացվող պահանջներին, քանի որ

դրանց հատկանշական են բնակչության և տարածքի համեմատաբար փոքր ցուցանիշներ, ազատ ներթափանցում դեպի արտաքին տարածություններ՝ ծով կամ ցամաք: Մոցիալական տեսանկյունից այդ կետերը համարվում են ինքնաբավ պատմամշակութային կենտրոններ, հատուկ ազգային-լեզվական միավորներ, որոնցից մի քանիսը տիրապետում են առևտրի և գործարարության հնագույն ավանդույթներին:

**Եզրակացությունը մեկն է աշխարհաքաղաքական նախագծերում այդպիսի նշանակության հավակնումը հնարավոր է ոչ թե աղերսանքի կամ հզորների գթասրտության միջոցով, այլ հզոր պետականության և սեփական ներուժի ճիշտ իրացման ու կարողությունների լիարժեք բացահայտման շնորհիվ:**

Հետևաբար՝ առկա և ապագայում սպասվելիք մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է ազգային ներուժի համախմբում, որը ենթադրում է ազգային աշխարհաքաղաքական պատկերացումների մշակման հստակ մեխանիզմների ներդրում: Այն ընկալելի և կիրառելի պետք է լինի ազգի յուրաքանչյուր ներկայացուցչի կողմից: Ազգային աշխարհաքաղաքական պատկերացումները պետք է ներառեն նաև սեփական հավակնությունները, որոնց արտահայտումը և կիրառումը վերապահված է հայկական աշխարհաքաղաքականության ակտորներին:

Հիմք ընդունելով աշխարհագրական հետազոտությունների գիտատեսական և մեթոդական առանձնահատկությունները՝ հայկական աշխարհաքաղաքականության համար առանձնացնում ենք ակտորների հետևյալ խմբերը՝

1. **Հայկական պետություն:** Այն դիտարկում ենք մյուս ակտորներից առանձին և առաջնային կարգով, քանի որ հայկական պետությունը համարում ենք ազգային աշխարհաքաղաքական պատկերացումների արտահայտման միակ նախապայման, աշխարհաքաղաքական գործընթացների գլխավոր օբյեկտ և սուբյեկտ, մյուս ակտորների գործունեության կարևոր հարթություն:

2. **Հայկական աշխարհաքաղաքական ներուժը պայմանավորող ակտորներ:** Այս խմբի մեջ ներառել ենք իրար հետ փոխպայմանավորված, բայց համեմատաբար ինքնուրույնությամբ առանձնացող երկու հարթությունով՝ ներուժի հասարակական և բնական բաղադրիչներով:

3. **Հայկական աշխարհաքաղաքականության դասական ակտորներ:** Ակտորների այս խմբում դիտարկել ենք հայկական բանակի, հայկական սփյուռքի և հայկական եկեղեցու գործունեությունները:

Ամփոփելով հայկական աշխարհաքաղաքականության բովանդակության վերլուծության հիմնական արդյունքները՝ կարող ենք փաստել, որ ազգային աշխարհաքաղաքական պատկերացումներում անհրաժեշտ է սահմանել առաջնահերթությունների հստակ ենթակարգություն, որը բացահայտվում է հետևյալ բանաձևերի օգնությամբ՝

**Առաջին պայման՝**  $H = H(X_1; X_2; X_3)$  Որտեղ՝  $H$  – հայ հասարակություն,  $X_1$ – բանակ,  $X_2$ – եկեղեցի,  $X_3$ – սփյուռք:

Այսինքն՝ ազգային աշխարհաքաղաքական պատկերացումների մշակման, իրացման և արտահայտման համար անհրաժեշտ է, որպեսզի հայկական աշխարհաքաղաքականության գլխավոր ակտորի՝ Հայաստանի Հանրապետության հիմնական բաղադրիչը՝ հայ հասարակությունը, նյութական և հոգևոր գործունեության ոլորտում լինի լիարժեք և հզոր: Իսկ վերջինս կախված է ոչ միայն ինքնակազմակերպման որակից, այլև հայկական աշխարհաքաղաքականության դասական ակտորների հզորությունից: Հետևաբար՝ հայ հասարակության հզորությունը ֆունկցիա է ազգային բանակի, ազգային եկեղեցու և սփյուռքի հզորությունից, որոնց գործունեությունը պետք է ուղղված լինի հայկական աշխարհաքաղաքականության առաջին պայմանի կատարմանը:

**Երկրորդ պայման՝  $P = P(H)$  Որտեղ՝  $P$  – հայկական պետականություն,  $H$  – հասարակություն:**

Այս բանաձևը բացահայտում է այն իրողությունը, որ հայկական պետականության հզորությունը ֆունկցիա է հայ հասարակությունից, այսինքն հայկական պետականության հզորության նախապայմանը՝ հայ հասարակության բարձր զարգացման մակարդակն է:

**Երրորդ պայման՝  $A = A(P)$  Որտեղ՝  $A$  – հայկական աշխարհաքաղաքականություն,  $P$  – հայկական պետականություն:**

Այս բանաձևը հաստատում է այն իրողությունը, որ ընդհանրապես ազգային աշխարհաքաղաքական պատկերացումների բովանդակությունը ֆունկցիա է հայկական պետականության հզորության աստիճանից: Այսինքն՝ միայն հզոր Հայաստանը, աշխարհի գեոպոլիտիկ կառուցվածքի բոլոր մակարդակներում կարող է ձևակերպել ազգային աշխարհաքաղաքականության հավակնությունները:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ներսիսյան Ա., Հայաստանը աշխարհաքաղաքական մեծ խաղատախտակում, - Վանաձ., 2013
2. Ներսիսյան Ա., Հայ քաղաքակրթական ինքնատիպության բացահայտման անհրաժեշտությունը որպես աշխարհաքաղաքական ինքնուրույնության նախապայման, - Գյումրի, ԳՊՄԻ, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, 2011
3. Վալեայան Լ., Աշխարհագրական կանխատեսում, - Եր., 2008
4. Lopot P. Histoire de la geopolitique. -Paris. 1995.
5. Moreau-Defarge Ph. La mondialisation. Paris, 1998

ARMENIAN GEOPOLITICS: SCIENTIFIC AND PRACTICAL TASKS

Nersisyan A. O., Srtashyan V. B.

Shirak state university

In article the questions connected with need of scientific research on "the Armenian geopolitics" which was considered from the point of view of theoretical, methodical and practical aspects are considered. As a result of researches those geopolitical factors which activity was were defined and will cause the maintenance of the Armenian geopolitics. Practical application of conclusions and recommendations will give the chance to bring to absolutely new level both focus of all Armenian geopolitics, and activity of certain actors.